ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 14 -ին, N 245-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՋԱՄՇԼՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԹԵՄՈՒՐ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ջամշլուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թեմուր Խուդոյանի 2025 թվականի հուլիսի 14-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ջամշլուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թեմուր Խուդոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 11-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2.Թեմուր Խուդոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ջամշլուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Ջամշլուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Աշոտ Շահնազարյանին:

3.Թեմուր Խուդոյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 15-ից:

Recoverable Signature

Ստորագրած է՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ